Ա՛յ քեզ թարս աշխարհ

Այս փողոցում ապրում են թարս հրամանները:
Ուտելիս անպայման խոսի՛ր:
Հաց ուտելիս ձեռքերդ մի՛ լվանա:
Ուրիշ թարս հրամաններ գրի՛ր:
Ջուր խմել չի՛ կարելի:
Ուտելիք առնել չի՛ կարելի:
Դասը մի՛ սիր ու հիասանանաս:
Բանս

Պատմությունը կարդա՛

Ուղտին անապատի նավ են ասում: Այդ դիմացկուն կենդանին լավ հարմարվել է անապատային կյանքին: Նրա թաթերը լայն են, և նա հեշտությամբ է շարժվում ավազի վրայով: Թաթերին հաստ կոշտուկներ ունի, որոնք պաշտպանում են ուղտին անապատի արևից շիկացած ավազից: Խիտ ու երկար բուրդն օգնում է նրան դիմանալու ցերեկվա շոգին ու գիշերվա ցրտին: Ուղտը բավարարվում է փշոտ թփեր ուտելով: Այդ համեստ կերից էլ ուղտի սապատներում ճարպի պաշար է կուտակվում: Այդ ճարպի պաշարն է օգնում նրան՝ անհրաժեշտության դեպքում մի քանի օր ոչինչ չուտել և դիմանալ: Ուղտը նաև քիչ ջուր է խմում: Բայց միանգամից ընդունակ է խմելու մինչև հիսունյոթ լիտր ջուր: Ուղտը կարողանում է նաև աղի ջուր խմել: Նա ապրում է երեսունհինգից-քառասուն տարի:

Հիմա գրի՛ր այսպես.

Ուղտերին անապատի նավ են ասում: Այդ դիմացկուն կենդանիները լավ հարմարվել են անապատային կյանքին: Նրանց թաթերը լայն են, և նրանք հեշտությամբ են շարժվում ավազի վրայով: Թաթերին հաստ կոշտուկներ ունեն, որոնք պաշտպանում են ուխտերին անապատի արևից շիկացած ավազից: Խիտ ու երկար բուրդն օգնում է նրանց դիմանալու ցերեկվա շոգին ու գիշերվա ցրտին: Ուղտերը բավարարվում են փշոտ թփեր ուտելով: Այդ համեստ կերից էլ ուղտերի սապատներում ճարպի պաշար է կուտակվում: Այդ ճարպի պաշարն է օգնում նրանց՝ անհրաժեշտության դեպքում մի քանի օր ոչինչ չուտել և դիմանալ: Ուղտերը նաև քիչ ջուր են խմում: Բայց միանգամից ընդունակ են խմելու մինչև հիսունյոթ լիտր ջուր: Ուղտերը կարողանում են նաև աղի ջուր խմել: նրանք ապրում են երեսունհինգից-քառասուն տարի:

Կատարված փոփոխությունները գրի՛ր

_____ Ուղտին -
ուղտերին_____
__

_____է-
են_____

_____նրա-
նրանց_____

_____նա-
նրանք_____

Մեկ բառով գրի՛ր

Ոսկուց շինված բաներ-ոսկեղեն

մորթուց շինված բաներ-մորթեղեն

բրդից շինված բաներ-բրդեղեն

կաթից պատրաստված բաներ-կաթեղեն

խմորից պատրաստված բաներ-խմորեղեն

երկաթից պատրաստված բաներ-երկաթեղեն

Ո՞ր մասնիկն ավելացրիր: Գրի՛ր: _____եղեն_____ մասնիկը ցույց է տալիս ինչ-որ նյութից _____սարքած_____ բաներ:

Նույն համարով նշանակի՛ր այն արտահայտությունները, որոնք կարող են փոխարինել տեքստում ընդգծված բառերին:

1. Կհամարձակվի-սիրտ կանի
2. Վախեցնում է- **սարսափի մեջ է գցում**
3. Դիմադրել- **դեմ կանգնել**
4. Հայտնվում-լույս ընկնում

Էս ժամանակ մի վագր է **լույս ընկնում** երկրում ու **սարսափի մեջ է գցում** ժողովրդին: Ո՞վ **սիրտ կանի** վագրի **դեմ կանգնել**: Ամենքն էլ Նազարի երեսին են նայում. վերևում Աստված, ներքևում՝ քաջ Նազարը:

Նախադասությունները լրացրո՛ւ

Աղվե՞սը թագավորի աղբանոցում ոսկի գտավ, թե՞ Շահ-մարը

Աղվեսը թագավորի՞ աղբանոցում ոսկի գտավ,

թե՞……Վազգենի……

Աղվեսը թագավորի աղբանոցո՞ւմ ոսկի գտավ,

թե՞……պահեստում……..

Աղվեսը թագավորի աղբանոցում ոսկի՞ գտավ, թե՞……Այֆոն տասչորս պրոմաքս…….

Աղվեսը թագավորի աղբանոցում ոսկի գտա՞վ,

թե՞……մոռացավ…….

Գրի՛ր ծաղիկների ու ծառերի անուններ

_____տանձենի. խնձորենի,բարդի,ծիրանենի,եղևնի-տոնածառ_____

_____վարդ, կակաչ,երիցուկ,խատուտիկ,վայրի վարդ _____

_____

Այդ անունների առաջին տառերը փոքրատառով սկսեցի՞ր: Ճի՛շտ է:

Ընդգծված բառերի փոխարեն գրի՛ր հակառակ իմաստ ունեցող բառեր.

Լինում է, չի լինում մի վախկոտ թագավոր է լինում: Նա շատ **թույլ** է լինում, որովհետև շատ **աղքատ** է լինում: Մի տգեղ աղջիկ է ունենում: Հավաքում է երկրի **անխելք** իշխաններին, որպեսզի աղջկան կնության տա: Հավաքվում են իշխանները, **համբերատար** սպասում թագավորի և **տխուր-տխուր** զրուցում: Հայտնվում է **մռայլ** թագավորն իր **տգեղ** դստեր հետ: Բոլորն **հոգնում** են:

Գտի՛ր թաքնված բառը և նրա մեջ կատարված փոփոխությունները գրի՛ր.

երկրագունդ, երկրամաս, երկրաչափություն, երկրաբան, երկրային
_____երկիր- ի տառը դուրս է
եկել_____

լրջանալ, լրջություն, լրջախոհ, լրջմիտ
_____լուրջ ու-ն դուրս է
եկել_____

գնդակ, գնդասեղ, գնդաձև, գնդացիր
_____գունդ ու-ն դարձել է-
ը_____

աղջնակ, աղջկական
_____աղջիկ_ի-ն դարձել է ը(կ-ն դուս է
եկել)_____

Պատմի՛ր ձեր բակի մասին

Ա. Բակը նկարագրի՛ր (ուշադիր եղի՛ր, ոչ մի մանրամասնություն չե՞ս մոռացել):
Բ. Պատմի՛ր քո բակի ընկերների մասին (ով ինչով է աչքի ընկնում):

Գ. Պատմի՛ր ձեր բակի մեծահասակների մասին, որոնք ինչ-որ բանով առանձնանում են մյուսներից:

Իմ բակը շատ հին է և միջին չափի այգի ունենք մեր բակում,մենք ունենք հին ժանգոտած դարպասներով ֆուտբոլի դաշտ: Ես չունեմ ընկերներ, քանի որ իմ առաջին ընկերը բակում գնացել է ամերիկա,իսկ իմ լավ ընկերը, ում հետ ես իջնում էի և խաղում կրակոցի, նա տեղափոխվել է, բայց ես գտա նոր ընկերներ, քանի որ ես ընկերասեր եմ: Մենք ունենք երկրորդ ֆուտբոլի դաշտ, այն ավելի մեծ է ու ավելի նոր:

Գիտե՞ք, որ…

Լուսինը Երկրին ամենամոտ գտնվող երկնային մարմինն է: Երկրի և Լուսնի միջև եղած հեռավորությունը փոփոխվում **է երեք հարյուր հիսունվեց հազարից** մինչև **չորս հարյուր վեց հազար** կիլոմետրի սահմաններում:
Լույսից զարմանալի բան, երևի թե, չկա: Նա սլանում է բնության մեջ հնարավոր ամենամեծ արագությամբ՝ վայրկյանում **երեք հարյուր հազար** կիլոմետր:
Գորտերն առաջին կենդանիներն են, որ **հազար ինը հարյուր վաթսունմեկ** թվականի մարտին սովետական տիեզերանավով տիեզերք բարձրացան ու ետ վերադարձան:

Ընդգծված բառերին նայի՛ր, ուշադրություն դարձո՛ւ՝ ինչպես են գրվում: